ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«08» մայիսի 2026թ. N 52-Ա

ՈՐԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ, ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ, ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ, ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշման հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետը և «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1-ին հոդվածի 1-ին մասի 29-րդ կետը

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել՝

1) քաղաքաշինության բնագավառում որակի գնահատման հանձնաժողովի աշխատանքների կատարման և գործերի քննության կարգը՝ համաձայն հավելված N 1-ի.

2) քաղաքաշինության բնագավառում որակի գնահատման հանձնաժողովի անդամների ընտրության կարգը և անհատական կազմը՝ համաձայն հավելված N 2-ի.

3) շահերի բախման առկայության կամ բացակայության վերաբերյալ հայտարարագրի ձևը՝ համաձայն հավելված N 3-ի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

4/8/2026

X

ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ քաղաքաշինության
կոմիտեի նախագահի
2026 թվականի մարտի 06-ի N 52-Ա հրամանի

ԿԱՐԳ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՈՐԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են բարձր աստիճանի վարկանիշավորում ունեցող քաղաքաշինության գործունեության սուբյեկտների՝ բարձրագույն աստիճանի վարկանիշավորման նպատակով լիցենզավորված գործունեության որակի գնահատման հետ կապված հարաբերությունները:

2. Քաղաքաշինության բնագավառում որակի գնահատման հանձնաժողովն (այսուհետ՝ հանձնաժողով) իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Քաղաքաշինության մասին», օրենքով, սույն կարգով և այլ իրավական ակտերով:

2. ՈՐԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կողմից ստեղծվում է լիցենզավորված գործունեության որակի գնահատման հանձնաժողով և նույն հրամանով նշանակվում է որակի գնահատման հանձնաժովի նախագահ և քարտուղար:

4. Հանձնաժողովի գործունեությունը կազմակերպվում է նիստերի միջոցով:

5. Հանձնաժողովի նիստերն անցկացվում են ըստ անհրաժեշտության՝ բարձր աստիճանի վարկանիշավորում ունեցող քաղաքաշինության գործունեության սուբյեկտների բարձրագույն աստիճանի վարկանիշավորման նպատակով լիցենզավորված անձանց կողմից կամավորության սկզբունքով ներկայացված հայտերի հիման վրա:

6. Հանձնաժողովի նիստերն իրականացվում են բացառապես էլեկտրոնային եղանակով՝ urban.e-gov.am համակարգի միջոցով (այսուհետ՝ է-համակարգ):

7. Հանձնաժողովի նիստերի օրակարգի նախագիծը ձևավորվում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի համապատասխան ստորաբաժանման կողմից:

8. Հանձնաժողովի նիստերի օրակարգում ընդգրկված բարձրագույն աստիճանի վարկանիշավորման հայտերը մինչև հանձնաժողովի քննարկման ներկայացնելը կարծիքի են ներկայացվում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից վարվող հանրային հսկողություն իրականացնող հասարակական կազմակերպությունների և զանգվածին լրատվամիջոցների ցուցակում ընդգրկված անձանց (այսուհետ՝ դիտորդներ):

9. Հայտերը դիտորդներին կարծիքի են ներկայացվում հանձնաժողովի նիստի օրվանից ոչ ուշ, քան 5 օր առաջ:

10. Դիտորդների կողմից ներկայացված կարծիքները կցվում են համապատասխան հայտերին՝ ներկայացնելով հանձնաժողովի քննարկմանը:

11. Հայտերի վերաբերյալ դիտորդների կողմից եռօրյա ժամկետում կարծիք չներկայացնելը հիմք չի հանդիսանում այն հանձնաժողովում չքննարկելու կամ մերժելու համար:

12. Հանձնաժողովի նիստերը վարում է հանձնաժողովի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում հանձնաժողովի նիստին մասնակից անդամների քվեարկության արդյունքում ընտրված անդամը:

13. Հանձնաժողովի նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում է Հանձնաժողովի անդամների թվի կեսից ավելին: Որոշումներն ընդունվում են հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում որոշումը համարվում է ընդունված հօգուտ հայտատուի:

14. Հանձնաժողովում հարցերի քննարկման ժամանակ կազմվում է արձանագրություն, որում նշվում է՝

ա) հանձնաժողովի նիստի անցկացման ամսաթիվը և տեղը,

բ) հանձնաժողովի կազմը,

գ) քննարկվող հարցի բովանդակությունը,

դ) քննարկմանը մասնակցող անձանց մասին տեղեկությունները,

ե) հանձնաժողովի եզրակացության բովանդակությունը,

զ) տեղեկություններ՝ ընդունված որոշման կամ եզրակացության հրապարակման մասին:

11. Հանձնաժողովի նիստերի արձանագրությունները գեներացվում է է-համակարգի միջոցով և համարվում է վավերացված:

15. Հանձնաժողովի որոշումները հրապարակվում են և պատշաճ ձևով ծանուցվում են հայտատուին է-համակարգի միջոցով:

16. Հանձնաժողովի նախագահը՝

1) ղեկավարում է հանձնաժողովի աշխատանքները.

2) հրավիրում և վարում է հանձնաժողովի նիստերը.

3) կազմում է հանձնաժողովի նիստի օրակարգը, որոշում նիստի անցկացման ժամանակը և վայրը.

4) ստորագրում է հանձնաժողովի անունից կազմվող գրությունները.

5) իրականացնում է սույն կարգով և այլ իրավական ակտերով իրեն վերապահված այլ լիազորություններ:

17. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) նախապատրաստում է հանձնաժողովի նիստերը.

2) նիստի անցկացման օրը կամ մեկ օր առաջ հանձնաժողովի անդամներին տեղեկացնում է հանձնաժողովի նիստի օրակարգի, ժամանակի և վայրի մասին՝ էլեկտրոնային փոստի միջոցով.

3) հանձնաժողովի քննարկմանն է ներկայացնում գործերի նախնական ուսումնասիրության արդյունքները և յուրաքանչյուր գործի վերաբերյալ եզրակացությունները.

4) արձանագրում է հանձնաժողովի նիստերը և ստորագրում այն.

5) կատարում է հանձնաժողովի նախագահի հանձնարարականները.

6) իրականացնում է սույն կարգով և այլ իրավական ակտերով իրեն վերապահված այլ լիազորություններ:

18. Հանձնաժողովի անդամները՝

1) մասնակցում են հանձնաժողովի նիստերին, կարող են ներկայացնել հարցադրումներ և քվեարկել.

2) հանձնաժողովի նիստերին հարգելի պատճառով չմասնակցելու դեպքում նախապես տեղեկացնում են հանձնաժողովի նախագահին կամ քարտուղարին.

3) սույն կարգի 17-րդ կետով սահմանված հանձնաժողովի անդամի լիազորությունների դադարեցման դեպքերի վերաբերյալ հանձնաժողովի նախագահն առաջարկություն է ներկայացնում Կոմիտեի նախագահին հանձնաժողովի անդամին փոխարինելու համար:

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐՈՒՄԸ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

19. Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարում են՝

1) նրա լիազորությունների ժամկետն ավարտվելու դեպքում.

2) անձնական դիմումի հիման վրա.

3) նրա մահվան դեպքում:

20. Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարեցվում են՝

1) էթիկայի կանոնները խախտելու դեպքում.

2) օրենքով և հանձնաժողովի աշխատակարգով նախատեսված իր պարտականությունները չկատարելու դեպքում:

3) շահերի բախման առկայության վերաբերյալ չհայտարարագրված տվյալների հայտնի դառնալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

21. Հանձնաժողովի նախագահի լիազորությունները դադարում են նրա՝ հանձնաժողովի նախագահի պաշտոնից հրաժարական ներկայացնելու դեպքում:

22. Հանձնաժողովի նախագահի կողմից իր պարտականությունները չկատարելը հիմք է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդի կողմից Կոմիտեի նախագահին առաջարկություն ներկայացնելու հանձնաժողովի նախագահին փոխարինելու համար:

23. Հանձնաժողովի գործունեությունը դադարում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

24. Հանձնաժողովը օրակարգում ընդգրկված հարցերը քննում է օրինականության, կողմերի իրավահավասարության, համաչափության սկզբունքների հիման վրա՝ ապահովելով փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը:

25. Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ Կոմիտեի նախագահի կողմից հանձնաժողովի կազմը հաստատելուց հետո, բայց ոչ ուշ քան հանձնաժողովի առաջին նիստի օրը շաբաթի բախման առկայության կամ բացակայության վերաբերյալ տեղեկացված լինելու մասին ներկայացնում են հայտարարագիր՝ համաձայն հավելված 3-ի:

26. Հանձնաժողովի անդամները պարտավոր են պահպանել հայտի քննության ընթացքում իրենց հայտնի դարձած օրենքով գաղտնի համարվող տեղեկությունները: Հանձնաժողովի անդամները պարտավոր են պահպանել նաև հայտի քննության ընթացքում իրենց հայտնի դարձած այլ տեղեկությունների, ինչպես նաև փաստաթղթերի բովանդակության գաղտնիությունը՝ մինչև համապատասխան որոշման հրապարակումը:

27. Օրակարգում ընդգրկված հարցերը քննվում են ներկայացված հայտերի, հայտերին կից փաստաթղթերի հիման վրա:

28. Լիցենզավորված գործունեության որակի գնահատման համար անհրաժեշտ փաստաթղթերը լիազոր մարմին են ներկայացվում է-համակարգի միջոցով կամ առձեռն կամ փոստով:

29. Լիցենզավորված գործունեության որակի գնահատման համար անհրաժեշտ փաստաթղթերը լիազոր մարմին մուտք լինելուց հետո այն տրամադրվում է համապատասխան ստորաբաժանմանը՝ գործին համապատասխան ընթացք տալու նպատակով:

30. Որակի գնահատման հանձնաժողովը լիազոր մարմնի կողմից հայտը և կից փաստաթղթերը ստանալուց հետո, գործերի քննության կարգին համապատասխան, 15 աշխատանքային օրվա ընթացքում իրականացնում է համապատասխանության գնահատում, որի արդյունքում հայտին տրվում է դրական կամ բացասական եզրակացություն:

31. Հանձնաժողովը գնահատման ավարտից 3 աշխատանքային օրվա ընթացքում գնահատման արդյունքների վերաբերյալ եզրակացությունը ներկայացնում է լիազոր մարմին:

32. Լիցենզավորված անձի բարձրագույն աստիճանի վարկանիշավորման հայտը բավարարվում կամ մերժվում է լիազոր մարմնի որոշմամբ:

33. Բարձրագույն աստիճանի վարկանիշավորման հայտի բավարարման դեպքում օրենքով սահմանված պետական տուրքը հայտատուն պարտավոր է վճարել ոչ ուշ, քան հայտը բավարարելու վերաբերյալ էլեկտրոնային եղանակով՝ քաղաքաշինության բնագավառի պետական ծառայությունների միասնական հարթակի (էլ. հասցե՝ urban.e-gov.am) միջոցով ծանուցումը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

34. Բարձրագույն վարկանիշավորման վկայականը տրվում է էլեկտրոնային եղանակով (էլեկտրոնային համակարգի կիրառմամբ)՝ 5 տարի ժամկետով, հայերեն լեզվով: Պահանջի առկայության դեպքում կարող են տրամադրվել նաև բարձրագույն վարկանիշավորման վկայականի թղթային տարբերակները:

Հավելված N 2
ՀՀ քաղաքաշինության
կոմիտեի նախագահի

2026 թվականի մարտի 08-ի N 52-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՈՐԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. Քաղաքաշինության բնագավառում որակի գնահատման հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) կազմված է հանձնաժողովի նախագահից, քարտուղարից և հանձնաժողովի 7 անդամից, որոնց լիազորությունների ժամկետը հինգ տարի է: Նույն անձը չի կարող երկու անգամից ավելի անընդմեջ ընտրվել որակի գնահատման հանձնաժողովի անդամ:

2. Հանձնաժողովի անդամներն են.

1) Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) մեկ ներկայացուցիչ,

2) բարձրագույն ուսումնական հաստատություններից (ԲՈՒՀ) երկու ներկայացուցիչ (համաձայնությամբ),

3) մասնագիտացված հասարակական կազմակերպություններից չորս ներկայացուցիչ (համաձայնությամբ):

3. Հանձնաժողովի անդամ կարող է ընտրվել այն անձը, որն օժտված է բարձր մասնագիտական որակներով, ունի քաղաքաշինության բնագավառում գիտական աստիճան կամ մասնագիտական աշխատանքային առնվազն երեք տարվա փորձառություն և ընդգրկված է որակի գնահատման հանձնաժողովի կազմում:

4. Հանձնաժողովի հնարավոր անդամների կազմը հաստատում է Կոմիտեի նախագահը՝ հինգ տարի ժամկետով:

5. Հանձնաժողովի անդամների թեկնածուներն առաջադրվում են պատահականության սկզբունքով, հաստատված որակի գնահատման հանձնաժողովի կազմից՝ urban.e-gov.am համակարգի միջոցով:

6. ԲՈՒՀ-երից կամ հասարակական կազմակերպություններից ստացված թեկնածուներից Կոմիտեի նախագահը հանձնաժողովի անդամներին ընտրելու համար կարող է անցկացնել հարցազրույց, որի ընթացքում հաշվի է առնվում թեկնածուի գիտական աստիճանը, կամ կոչումը, կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելը, առնչությունը գիտելիքների ստուգման կամ կրթական գործընթացներին, ինչպես նաև ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

7. Որակի գնահատման հանձնաժողովի անհատական կազմի աղյուսակ

Հանձնաժողովի	Ա.Ա.Հ	Պաշտոնը
նախագահ՝	Դավիթ Համլետի Գրիգորյան	Քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմնի ներկայացուցիչ, տ.գ.թ., դոցենտ
անդամներ՝	Նշան Եփրեմի Մարտիրոսյան	Քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմնի ներկայացուցիչ, տ.գ.թ.
ՃՇՀԱՀ	Վարազդատ Փայլակի Հովհաննիսյան	ՃՇՀԱՀ կրթության որակի ապահովման և զարգացման կենտրոնի ղեկավար, տ.գ.թ., դոցենտ
	Ավետիք Արտավազդի Արզումանյան	ՃՇՀԱՀ շինարարական նյութերի, պատրաստվածքների և կոնստրուկցիաների արտադրության ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ
	Արամ Աշոտի Սահակյան	ՃՇՀԱՀ շինարարության ֆակուլտետի դեկանի ժամանակավոր պաշտոնակատար, տ.գ.թ., դոցենտ
ՀԱՊՀ	Ռոմիկ Հովհաննեսի Ավոյան	ՀԱՊՀ էներգետիկայի և էլեկտրատեխնիկայի ինստիտուտի տնօրեն
	Վարդան Կարապետի Համբարյան	ՀԱՊՀ էլեկտրական մեքենաներ և ապարատներ ամբիոնի դոցենտ, տ.գ.թ.
	Սմբատ Յուրիկի Այդինյան	ՀԱՊՀ էներգետիկայի բաժնի պետ
	Սարգիս Հրաչիկի Հայրոյան	ԵՊՀ երկրաֆիզիկայի, ճարտարագիտական երկրաբանության և ջրաերկրաբանության ամբիոնի

ԵՊՀ		պրոֆեսոր, երկրաբանական գիտությունների դոկտոր
	Աշխեն Հայկի Հովհաննիսյան	ԵՊՀ քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի դոցենտ, աշխարհագրական գիտությունների թեկնածու
	Արտակ Սարգսի Փիլոյան	ԵՊՀ քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, աշխարհագրական գիտությունների թեկնածու
ՀԱԱՀ	Գուրգեն Մարկոսի Եղիազարյան	ՀԱԱՀ գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
	Պարույր Սերգեյի Էֆենդյան	ՀԱԱՀ տ.գ.թ., պրոֆեսոր
	Նաիրա Գրիգորի Ալոյան	ՀԱԱՀ տ.գ.թ., դոցենտ
Շինարարների միություն	Գագիկ Հմայակի Մարտիրոսյան	Շինարարների միության պատվավոր անդամ, ինժեներ-շինարար
	Գրիգոր Ստեփանի Ազիզյան	«Հայնախագիծ» ԲԲԸ տնօրեն
	Աշոտ Հրաչիկի Վարդանյան	«ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ տնօրեն
Ճարտարապետների պալատ	Բորիս Մոնիստի Քոչարյան	Հայաստանի ճարտարապետների պալատի նախագահի տեղակալ
	Վրեժ Սերյոժայի Թամազյան	Հայաստանի ճարտարապետների պալատի խորհրդի անդամ
	Գառնիկ Արայիկի Ստեփանյան	Հայաստանի ճարտարապետների պալատի խորհրդի անդամ
	Գուրգեն Հրանտի Գրիգորյան	«Կառուցապատողների հայկական ասոցացիա» ՀԿ նախագահ
	Լևոն Գարրիի Կասպարով	«Կառուցապատողների հայկական ասոցացիա» ՀԿ խորհրդի անդամ,

ՀԿ		Համաշխարհային առևտրի կենտրոնի տնօրինության անդամ
	Արմեն Սուրենի Ղազարյան	«Յունիք խորհրդատվական խումբ» ՍՊԸ ճարտարագետ, կոնստրուկտորի օգնական
քարտուղար՝	Անի Ռոբերտի Մխիթարյան	Քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմնի ներկայացուցիչ

Հավելված N 3
ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի

2026 թվականի մարտի 03 -ի N 52-Ա հրամանի

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ
ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ որակի գնահատման հանձնաժողովի անդամ _____ հայտարարում եմ,
Անուն, ազգանուն

որ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի կողմից ընդունված որոշման հիմքով որակի գնահատման հանձնաժողովի գործընթացի շրջանակներում իմ և հանձնաժողովի նիստի օրակարգում ընդգրկված _____ ինձ հետ փոխկապակցված չէ ☐
տնտեսվարող սուբյեկտի անվանումը

որ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի կողմից ընդունված որոշման հիմքով որակի գնահատման հանձնաժողովի գործընթացի շրջանակներում իմ և հանձնաժողովի նիստի օրակարգում ընդգրկված _____ ինձ հետ փոխկապակցված է* _____
տնտեսվարող սուբյեկտի անվանումը նկարագրվում է փոխկապակցվածությունը

և (կամ) առկա է շահերի բախում** _____
նկարագրվում է շահերի բախման դեպքը

_____

Հաստատում եմ, որ ներկայացված տվյալները հավաստի են և ճշգրիտ՝ ☐

_____ _____ _____ 20 թ.
(Հայտարարագիր ներկայացնողի անունը, ազգանունը, ստորագրությունը)

*Փոխկապակցած է համարվում տնտեսվարող սուբյեկտի հետ՝
եթե հանդիսանում է աշխատակից, բաժնետեր կամ սեփականատեր, հիմնադիր կամ համահիմնադիր, ունի պայմանագրային համագործակցություն, իրավական տեսանկյունից՝ հարկային և հակակոռուպցիոն ոլորտներում ունի փոխկապակցվածություն (կողմերից մեկի կողմից առկա է վերահսկողական ազդեցություն), ընտանեկան (օրինակ՝ տնտեսվարող սուբյեկտի տնօրենը ընտանիքի անդամ) կամ այլ անձնական (օրինակ՝ բիզնես գործընկերոջ հարազատ) կապի դեպքում:

**Շահերի բախում է համարվում այն իրավիճակը, երբ որակի գնահատում իրականացնող հանձնաժողովի անդամն իր լիազորություններն իրականացնելիս պետք է կատարի գործողություն կամ ընդունի որոշում, որը ողջամտորեն կարող է մեկնաբանվել որպես իր կամ իր հետ փոխկապակցված տնտեսվարող սուբյեկտի շահերով առաջնորդում: